

սակ կարծիքէ ու աստիճանէ մեծամեծ մարդիկ, մասնաւորապէս ճեմականաց շատերը, ծերակուտի անդամներ և նըւլիրակներ, պաշտօնեայք և պաշտօնատեալք, այլ և այլ ուսումնական ժողովոց և վարժոցաց ներկայացուցիչք թիէր, բաղէն, Պէոփէ, Նիզառ, տը Պրոկլի, Բրէվոյ-Բարատոլ, Պարոն Տիւրիւի՝ հասարակաց կրթութեան պաշտօնեայն, Վայեան մարաջախտը և Շանկառնիէ զօրավարը, Լուտ կլէտրուղըն որ բարեկամ էր վախճանելոյն, և այլն և այլն։ Թաղման օրը Գուգէնի գերեզմանին վրայ խօսուեցան երկու փոքրիկ ճառեր ։ որոնցմէ առաջինն արտասանեց Պ. տը Աստի յանուն Գաղղիոյ ձեմարանին ։ իսկ երկրորդը Պ. Բաղէն յանուն Դավրութեանց Վարժոցին ։ Պ. տը Աստի այսպէս կը լմբնցընէր իր ճառը. « Ոչ. այն մարդը որ դեռ երէկ կը գրէր այս էջերս որ լի են յԱստուած վատահովթեամբ և մեր բնութեանը անմահական վիճակի մը յուսով, բոլորովին մեռած չէ ։ Աչուընուս տակ տխուր դիակ մ'ունինք, բայց մարդն ոչ է անդ ։ Գուգէն կ'ապրի իւր գրուածքներուն մէջ, կ'ապրի այն ազնուական շարժմանը մէջ զոր տուաւ մեր դարուն փիլիսոփայութեանը ։ իր անունը որ միացած է Ցէգարդի, Մալպրանշի, Լայպնիցի անուններուն հետ՝ չկրնար կորսուիլ, պիտի չկորառի ։ Գուգէն կ'ապրի բարեկամներուն սիրտը, երկու ձեմարաններուն յիշատակաց մէջ որ իրենց փառք կը համարէին իրեն անդամակցութիւնքը՝ օր պիտի գայ որ իրենք ալ պիտի մեռնին ։ և եթէ ուրիշ անմահութիւն մը չըլլար՝ ոչ ինչ էր. փառաց ունայնութեամբն հանդերձ մեր վախճանը մահ պիտի ըլլար ։ Գուգէն կը հաւատար ճշմարիտ անմահութեան, որուն պերճախօս և համոզուած առաքեալն եղաւ իր ամբողջ կենացը մէջ. իրեն յոյսը պարապ պիտի չելլայ ։ Վերջին անդամ մ'ալ ողջունենք իր մարմինը. իսկ հոգին՝ առ Աստուծոյ պիտի գտնանք » :

Գուգէնի փիլիսոփայական և մատենագրական ոճոյն ազգայնոց ճաշակ մը տալու համար, հետագայ թերթերէն մէկուն մէջ կը թարգմանենք իր Յաղագս ձշմարտին, Գեղեցկին և Բարույն գրքէն այն գլուխը յորում կը խօսի Ժէդարուն մէջ գաղղիական արուետին վրայ ։

ՄԵԾԱՄԵԾ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Կորիլլոյ կապիկը.

(Տես Էջ 148:)

Որսորդութեան ուրիշ դիպուածներ ։ Առաւօտ մըն էր. գիշերը սոսկալի անցեր էր. զարհուրելի մրրիկ մը մարեր էր բանակետղին կրակները և նեղեր էր մեր ճամբորդները ։ Կորիլլոյին աղաղակը լսուեցաւ, և մէկէն Պ. տիւ Շայլիւ սրտոտեցաւ ։ Խմեց թաս մը խահուէ և պաքսամատ մը կերաւ և ոչինչ աւելի, վասն զի կերակուրը քիչ էր, ու գնաց ։

Հազիւ մղոնի չորրորդ մասը ըրեր էին՝ գարձեալ նոր մանշիւն մը լսուեցաւ ։ կենդանին հեռու չէր, և ճամբուն մացառներուն ծռելէն կ'իմացուէր գաղանին մօտենալը ։ Որսորդները կանկառին և լուռ կեցան, վախնալով որ չկատղեցնեն ։ աւելորդ զգուշութիւն մըն էր այս ։ Կորիլլոն զիրենք տեսնալուն պէս ճեղքեց մացառները, երկու ոտքերուն վրայ ելաւ կանգուն կեցաւ, քանի մը քայլ առաւ, կայնեցաւ, նըստաւ, հնչեցուց իր լայն կուրծքը բռնցի հարուածներով ։ այլ գարձեալ վեր ելաւ կայնեցաւ, քանի մը քայլ ըրաւ, գարձեալ կեցաւ բացաւ անձաւանման բերանը և մռնչեց ։

Երբոր տասը քայլ հեռաւորութեամբ մօտեցեր էր՝ Պ. տիւ Շայլիւ յարմարժամանակ սեպեց ։ հարուածը ճիշդ կուրծքը ինչեցուց և երեսն ՚ի վայր գետին փոեց ։ « Այս կենդանիները, կը

խորհրդածէ մեր հեղինակը, դիւրաւ կը մեռնին, միւս վայրենի գազանաց շատին պէս դիմացկուն չեն. այս բանս աւելի մարդկային նմանութիւն է. արու կորիլոյ մըն էր միջին տարիքով»:

Ուրիշ նոր դիպուած, նոր յաղթութիւն մըն ալ: Կենդանուոյն մօտ ըլլալը իմացեր էին մունչելէն. բոլորովին մօտ կը կարծէին, սակայն հարկ եղաւ որ երեք քառորդ քալեն ինչուան հանդիպեցան: Մարդիկը տեսնելուն պէս, եկաւ համարձակ անոնց քով, իրարուետե սրածայն հանելով:

«Մօտենալու կերպէն անգամ մըն ալ առիթ ունեցայ դիտելու, կը դրէ Պ. տիւ Շայլիւ, թէ երկար ատեն կենալու չէր կրնար դիմանալ: Կարծ և բարակ ուտքերը բաւական ոյժ չունին մարմնոյն զանգուածը կրելու, ծանրութենէն կը ծռի, և տեսակ մը ճօճումով կը քալէ, ուրիրեն երկայն բազուկները ձախ կերպով կը գործածէ գաւազանի տեղ: Երկու անգամ նստաւ մունչեց, կարծես թէ կը զգար որ ձայնին լիուլի հընչմանն ու ազդեցութեանը համար հարկաւոր զօրութիւնը կը պակսէր եթէ ուտքի վրայ կենար:

«Հրացանս լեցուցի, կրնայի զէնքիս վրայ վստահիլ, և ամենուն առջեւն կը քալէի: Սպասեցի որ այլանդակ գազանը ինձմէ տասը քայլ հեռու ըլլայ, և երբ վերջին անգամ մըն ալ կեցաւ որ մոնչէ՝ հրացանս պարպեցի. և ինքը երեսն ՚ի վայր ընկաւ և մեռաւ:

«Արու մատաղ կորիլոյ մըն էր առոյգաբերձ, մեծդի հերձատամներով, մատները ճիրանանց նման, կուրծքին և թեսերուն երիկամանցը թանձրութիւնը յոյր և աճեցուն. համառօտ ըսել բովանդակ արտաքին երեսյթէն յայտնի կ'ըլլար թէ սկայաձեւ ոյժ մը ունէր:

«Երբէք չկրցայ մեռած կորիլոյ մը տեսած ժամանակս անտարբեր ըլլալ. ուր մնաց այն յաղթական ուրախութիւնը զգալ զոր որսորդը կրնայ ունենալ յաջող հարուածին վրայ: Անանկ մը կու գար միշտ ինծի որ թէպէտ հրէշային բայց միանգամայն մարդանման

արարած մը սպաննած ըլլամ. և որչափ ալ իրաւ չէր այս բանս, սակայն զգացմունքը ազգու էր իմ արտիս մէջ:

» Կենդանին հինգ ոտնաշափ և ութը բթաշափ երկայն էր »:

Ամէն որսորդութիւնները այս բարերազդ եքը չեն ունենար: Անգամ մը Պ. տիւ Շայլիւ երրոր անտառներուն մէջ որսի ելած էր պզտի բանակի մը գլուխ անցած, իր անխոհեմ ընկերակիցներէն մէկը համարձակեցաւ մինաւորիկ յառաջանալու, ուր կորիլոյի մը հանդիպելու յոյս կար: Գրեթէ ժամ մը անցեր էր քանի որ զինքը աչքէ կորսունցուցեր էին, երբ մէյմալ հրացանի հարուած մը լսուեցաւ հեռուանց: Ետքը երկրորդ մ'ալ: Ամէնքը վազեցին ձայնին ուղղութեամբ յուսալով մեռած կորիլոյն գտնալ. և ահա անտառը զարհուրելի մունչիւններով սկսաւ թնգալ:

» Քամպոյ սաստիկ շփոթած թեկս բռնեց, և ձախորդ գուշակութիւններէ վախնալով ընթացքնիս շուտցուցինք, և շատ շանցաւ վախերնիս իրաւ ելաւ: Խեղճ ընկերնիս որ ինքզինքը վրտանգի մէջ դրած էր միս մինաւորիկ արիւնաշաղախ հողոյն վրայ ինկած էր: Փորը սաստիկ պատռուած և բոլոր վորտիքները դուրս ընկած էին. քովն էր հրացանը որուն բունը ջախջախեալ էր, և ծուած ու տափկած գլանին վրայ կորիլոյին ակառներուն նշանները կ'երևային:

» Խեղճը մեռած չէր. վաթթեցինք վէրքերը, քիչ մը օղի խմցուցինք որովինքինքը գտաւ և թէպէտ դժուարաւ սակայն սկսաւ խօսիլ և պատմեց թէ սաստիկ կատղած և արու մեծ կորիլոյի մը հետ դիմացէ դիմաց դտնուած էր, և թէպէտ տասը քայլ հեռաւորութեամբ հրացանը պարպեր էր, այլ անտառին նոյն տեղը սաստիկ մութ ըլլալուն՝ հարուածը վրիպեր, և կենդանուոյն կողը միայն վիրաւորեր էր: Կորիլոյն ան ատեն կատաղութեք կուրծքը զարնելով իր ախոյեանին վրայ սկըսեր էր գալ:

» Փախչիլը անկարելի էր, քանի մը

քայլէն գազանը վրայ կը հասնէր. կեցեր
էր ուրեմն, որչափ կարելի էր շուտով լե-
ցընելով հրացանը. բայց զէնքը վեր առ-
նելուն ժամանակ՝ կորիլլոն ձեռքէն վար
ձգեր էր և իյնալուն ժամանակ հարուա-
ծը ճաթեր էր. Նոյն վայրկենին կենդա-
նին մռնչելով այլանդակ թաթին մէկ
հարուածովը պատուեր էր որաորդը, ա-
ղիքները դուրս հանելով. խեղճին իյնա-
լու ատենը գազանը յափշտակեր էր
նաև հրացանը և ճմիեր էր զօրաւոր ծա-
մելեացը մէջ»:

Երբ Պ. տիւ Շայլիւ հասաւ հոն, կո-
րիլլոն անյայտացած էր: « Այս կենդա-
նեաց սովորութիւնն է որ երբ վրանին
մէկը յարձըկի քանի մը հարուած ինե-
ցընենէն ետքը իրենց կատաղութեան
զոհը գետնին վրայ ձգած՝ մացառնե-
րուն մէջ կը քաշուին »:

Խեղճ մարդը բանակը տարինք և ըս-
տիպուեցաւ դարձեալ պատմելու գըլ-
խուն եկածը, ու ամէնքը հաստատեցին
թէ ոչ կորիլլոյ այլ մարդ՝ փոխուած կո-
րիլլոյ եղած չար մարդ մըն էր վրան
յարձըկողը: Ոչ որ, կ'ըսէին, կրնար ա-
ղատիլ այնպիսի էակի մը ձեռքէն, և
ոչ իսկ առաջին քաջայանդուղն որաորդ
ները կրնային սպաննել զինքը:

Սակայն երկրորդ օրը սպաննուեցաւ,
բայց իրեն զոհ եղող թշուառ որսորդն
ալ քանի մը ժամէն մեռաւ:

Պ. Պապիք: — Պ. տիւ Շայլիւ, որ
այնչափ հասակաւոր կորիլլոներ սպան-
նած է, ողջ ամեննեին բռնած չէ. կը
հաստատէ թէ նաև անկարելի է ողջ
բռնելը: Մատաղներուն որաը տարբեր
է, թէպէտ և գործը նոյնպէս դժուար:

Քանի մը օգնական որսորդք՝ որ մեր
ճամբորդը առած էր իր ծառայութեա-
նը համար, գացած էին իրեն հրամանին
համեմատ անտառները ջարդելու: Հինգ
հոգի առանց ձայնի անտառին մէջէն
կ'անցնէին, երբոր լսեցին պղտի կորիլ-
լոյի մը աղաղակը որ մայրը կը կանչէր:
կէս օրուան մօտ էր. խորունկ լուութիւն
մը կը տիրէր: Աղաղակը երկրորդ ան-
գամ մ'ալ լսուեցաւ: Որսորդները

դիտնալով թէ ինչ մեծ ուրախութիւն
պիտի ըլլայ իրենց տիրոջը համար պըզ-
տի կորիլլոյ մը բռնելնին, որոշեցին այն
կողմն երթալու՝ ուսկից որ ձայնը կու
գար: Հրացանը ձեռուընին, անցան
խիտ մացառի մը մէջէն. քանի մը նը-
շաններէ իմացան որ մայրը հեռու չէր,
և կրնար կարծուիլ թէ արուն ալ մօտ
շրջակայից մէջ ըլլար. սակայն քաջ որ-
սորդները չտարակուսեցան:

Մեռածի պէս լոիկ մնջիկ հաղիւ
շունչ առնելով առաջ կ'երթային: Ի-
րենցմէ քանի մը քայլ առաջ՝ մացառ-
ները շարժեցան: Մէկէն տեսան մա-
տաղ կորիլլոյ մը որ նատած ուտելու
հետ էր, քիչ հեռու նոյնպէս մայրը
նատած կ'ուտէր: Նոյն վայրկենին յո-
րում հրացանները կ'ուղղէին, մայրը
տեսաւ զիրենկը. հրացանները արձկե-
ցին, և անիկայ մահացու վիրաւորուած
ինկաւ:

Հրացանին արձակման ձայնէն պղտի
կորիլլոն պառուած էզին վրայ վաղեց,
զրկեց, և ծոցին մէջ հանգչեցաւ: Որ-
սորդներուն յաղթութեան ձայնէն խել-
քը գլուխը գալով մօրը մարմինը լզեց,
ծառի մը վրայ ելաւ, և ինչուան գագա-
թը բարձրացաւ, ուր նատաւ և սկսաւ
մռնչել:

Մերը շփոթած էին՝ չուզելով ոչ վի-
րաւորել և ոչ ալ վիրաւորիլ. Վերջա-
պէս մոտածեցին ծառը կոտրել. և իյնա-
լու և միանգամայն փոքրիկ հրեշին զար-
մացման ժամանակ՝ սփածանելի մը գը-
լուխը նետեցին՝ այսու հանդերձ մէ-
կը ձեռքէն՝ միւան ալ սրունկէն վիրա-
ւորուեցաւ:

Եւ որովհետեւ այս ձառադէմ և ման-
կահասակ կենդանին զարմանալի զօ-
րութիւն մը ունէր և ոչ ոք կրնար սան-
ձել իր կատաղութիւնը, չէին զիտեր
թէ ինչպէս տանին: Վերջապէս վիզը
երեքժանիի մէջ խոթեցին որով հեռու
կը բռնուէր և միանգամայն չէր ալ կըր-
նար փախչիլ, և այս կերպով Պ. տիւ
Շայլիւին բերին: « Զեմկրնար, կը զրէ,
իմացած զգացմունքս պատմել: Այս
մէկ վայրկեանով Ափրիկէի մէջ կրած

աշխատութեանցս վարձին ընդունեցայ» :

Բոլոր գեղը շարժման մէջ էր : Մատաղ կորիլլոն կը մննչէր և կը գոչէր . պղտիկ աշուրներով կայծակի պէս կը նայէր , և եթէ կարենար մէկը ձեռք ձգել բանը վատ էր :

Երկու ժամուան մէջ հնդկեղեղեայ աղէկ ամուր հիւղ մը շինեցին , բաւական լայն վանդակներով որպէս զի կապիկը կարենայ տեսնալ և տեսնուիլ : Բոնութեամբ մէջը փակեցին զինքը . և Պ. տիւ Շայլիւ կրցաւ վայելել հանդարտութեամբ իր բոնակալութեան տեսարանը :

Արու մատաղ կորիլլոյ մըն էր , որ ապահովապէս դեռ երեք տարուան չկար : Երեսը և ձեռքերը բոլորովին սև էին . աչքերը հասակաւորներուն պէս այնչափ խոր մտած չէին : Ետեւ մազերը կը սկըսէին յօնքէն և կը բարձրանային մինչև դագաֆաթը ուր սեռութիւնը կարմրի կը զարնէր . երկու կողմանէ երեսին վըրայ իջնելու համար ինչուան ներքին ծամելիքը , կերպ մը ֆակորի մօրուքի նման : Վերի շրթունքը հաստ և ցանցառ կաշիով պատեալ էր . արտեանունքը շատ բարակ էին , յօնքերը շիտակ՝ և բիթաշափի իրեք մասին չափ երկայն :

Կոնակի մորթը երկաթի նման մոխրագոյն էր . կուրծքը և փորը նոյնպէս մազոտ . բայց ուրիշ ամէն կողմերէն աւելի երկայն էր բազուկներուն մորթը , և անոնց վրայ կ'երևար սև գորշախառն գոյն մը , որ կը պատճառէր արմատներուն ճերմակ և ծայրերուն բոլորովին սև ըլլալէն . ծնկուրները միխրագոյն սև , և քանի ողոքներուն կը մօտենար այնչափ աւելի կը սենար . իսկ ոտքերուն գոյնը բոլորովին սև :

Զգենք հիմայ որ Պ. տիւ Շայլիւ պատմէ այս պապիին ըրածները ու ձիերը :

« Երբոր տեսայ այս պղտի ընկերակիցս պնդապէս փակուած վանդակին մէջ մօտեցայ քանի մը խրախուսական խօսքեր իրեն ուղղելով : Հեռուն անկիւն մը քաշուած կեցեր էր , բայց հազիւ

թէ իրեն կը մօտենայի՝ մոնչեց և վրասեկաւ , և թէպէտ ես ջանացի ըստ կարելոյն շուտով ետ քաշուիլ՝ սակայն յաջողեցաւ տաբատո բոնելու և թաթովը պատռեց . յետոյ դարձեալ անկիւնը դարձաւ : Այս յարձակմունքը աւելի շրջահայեաց ըրաւ զիս , սակայն և այնպէս չյուսահատեցայ զինքը ընտանեցընելին :

» Վանդակին խորը կծկած կեցեր էր . միխրագոյն աչքերը անզգամ նայուածք մը ունէին . ոչ երբէք այս պղտի գազանին նման ժանտ երես տեսեր եմ :

» Առաջին ընելիքս եղաւ իմ արդեշականիս հարկաւոր եղածը ճարել : Մարդ խաւրեցի որ այս կենդանւոյն սիրած պղտուղներէն գտնան բերեն և աման մը ջրով հանդերձ զասոնք իրեն քով դրի : Բայց չուզեց բանի մը գըպչիլ ինչուան որ ես ըստ բաւականին չհեռացայ անկից :

» Երկրորդ օրը գտայ զթոէ – այս անունը զրեր էի իրեն – առջի օրու ընէն աւելի կատաղի : Աղաղակաւ և վայրենի ոստոստմամբ վանդակին մօտեցողին վըրայ կը յարձըկէր , և կարծես թէ զմեզքիկ բզիկ պիտի ընէր : Նոյն օրը առջեր քանի մը անանասի տերեններնետեցի , և զիտեցի որ միայն ճերմակ մասերը կ'ուտէր . սակայն կը տեսնուէր թէ աղէկ ախորժակ ունի , թէպէտև բնիկ անտառուին տերեններէն և պղտուղներէն դուրս ամէն բան կը մերժէր :

» Երրորդ օրը երեսը աւելի սաստիկ խորշունեցուց և գազանացուց . երբ տեսնար որ մէկը իրեն մօտենալու միտք ունի իսկոյն կը մոնչէր կամ անկիւնը քաշուելով և կամ յանդուգն մօտեցողին վրայ ցատկելով յարձըկելու համար :

» Չորրորդ օրը , երբ ոչ սք կար հոն , կրցաւ վանդակին երկու անջրապետները կոտրել ու փախչիլ : Մէկէն բոլոր սեւը ոտք հանեցի , ու անտառը խրկեցի որ խուզախնդրեն : Բայց երբոր ես փութով տունս կը մտնայի հրացաններէս մէկը առնելու , և ահա անկողնոյս տա-

կէն սպառնալից ձայն մը լսեցի. մեր Յոէն էր որ այս ծածկուած տեղէն իմ ամէն շարժմունքս կը դիտէր : Փութացի պատուհանները գոցեցի, և մարդիկ օգնութեան կանչեցի որ գուռը պահպանեն : Երբոր Յոէն սեւերես մարդիկը տեսաւ՝ կատղեցաւ և անկողնին տակէն հրացայտ աչքով վեր ցատքեց. դուրս ելանք դուռները վրան գոցելով, և զինքը սենեկին մէջ աղատ ձգեցինք, լաւ համարելով հանդարտութեամբ բռնելու հնարք գտնալ, քան թէ փութալ ու իր սոսկալի ակռաներուն զմեզ մատնել :

» Սակայն Յոէ սենեկին մէջտեղը կեցեր էր կասկածանօք չորս կողմի եղածները դիտելով : Վախցայ որ ճօճանակիս ձայնէն՝ կատաղութիւնը մեծադին ժամացոյցիս վրայ չժափէ :

» Վերջապէս քիչ մը հանդարտած տեսնալով՝ ուսուկան մը բերել տուի, և յանկարծ դուռը բանալով գիխուն վրայ ձգեցի . ան ատեն ոտնակապեալ սկսաւ զարհուրածայն մոնչել և ամենայն կերպ աքացի նետել : Ես ծոծրակէն բռնեցի, երկու հոդի ալ բազուկներէն և շորրորդ մը ծնկերէն . այսպէս չորս մարդկանց ձեռքը կալանաւորեալ այս անհեթեթ արարածը մեզի շատ նեղութիւն տուաւ : Բատ կարելոյն շուտով տարինք և նորոգեալ վանդակին մէջ զրինք, և դարձեալ վակեցինք : Կենացս մէջ այսպիսի կատաղի կենդանի տեսած չեմ. երկու օք իրարու ետև ամենեին կերպը չփոխեց . սկսայ անսուազ բռնել, և այս շահեցայ որ քսանուչորս ժամ անօթի կենալէն ետքը եկաւ ծանրաքայլ ձեռքիս մէջէն անտառային բռնսոց սերմունքն առաւ ու անկիւնը քաշուեցաւ կերաւ :

» Մտադիր քննասիրութեամբ տասնըհինգ օր միակերպ դիտեցի, բայց ուրիշ նոր բան մը շտեսայ . տասնըվեցերորդ օրը երբ կերակուր կը տանէի՝ տեսայ որ վանդակին հնդկեղեգներէն մէկը կը կրծուած էր և զագանը դարձեալ վախեր էր : Բարեբազգաբար հեռու չեր, և բոլորտիքս նայելով տեսայ որ Յոէն

չորս թաթ ցատքելով շտապաւ կը վազէր մարդագետնի մը մէջէն դէպ ՚ի թանձր ծառանոցը :

» Մարդիկներս կանչեցի և պաշարեցինք զինքը, որ փոխանակ ծառի վրայ ելլալու՝ անտառակին ծայրերը կանկառաւ կեցաւ : Հարիւրյիսուն հոգի բուլրակ մը ձեացուցինք չորս կողմը : Ան ատեն ոռնալով խեղճ մէկուն վրայ յարձեկեցաւ, որ վախէն գետին ինկաւ, բայց իյնալը աղէկ եղաւ, վասն զի գաղնը շփոթեցաւ և ժամանակ տուաւ որ բերած ուռկաննիս վրան ձգենք :

« Ալ այս անգամ ես վանդակին չվրատահեցայ, ուստի վիզը պղտի շղթայ մ՝ անցուցի . սակայն ժամ մը հարկ եղաւ այս պղտիկ գաղանը շղթայի զարնելու համար :

» Այս վայրկենէն սկսաւ ուրիշ ախտերուն հետ նենգաւորութիւն ալ բանեցնել շատ անգամ երբ կու գար կերակուրը ձեռքէս առնելու . պիշ պիշ երեսս կը նայէր որպէս զի զբաղեցնէ զիս և մի և նոյն միջոցին թաթը առաջ կը բերէր, ուզելով ծունկիս վնասել : Շատ անգամ սոնազգեստս բղկտեց . համառօտ ըսելով՝ ստիպուեցայ անբաւ զգուշութեամբ քովը մօտենալ : Աները առանց զանիկա մոլեգնելու չէին կրնար հոնկից անցնիլ :

» Իրեն մօտ եղած տակառի մը կէսը չորսուով լեցուցի, որպէս զի բարձի տեղ ծառայէ . մէկէն զիտցաւ գործածել . ախտրժելի էր տեսնալը թէ ինչպէս բարձը կը խառնէր և այս բոյնին մէջ կ'ամփոփուէր : Գիշերը վրայ գալով մէյմը բոյնին մէջ կծկելէն վերջը, ծածկեց զինքը անռնցմով :

» Երկրորդ փախուստէն տասը օր ետքը մեռաւ : Ամենօրեայ կերած կերակուրէն այնպէս կը կարծուէր թէ աղէկ առողջ ըլլայ . մահը չարչարակից եղաւ » :

Քանի մը ամիսէն վերջը անոր տեղը ունեցաւ ուրիշ մը : Այս անգամ Պ. տիւշայիւ մամնակից եղաւ կենդանւոյն դերի բռնուելուն :

« Լութեամբ կը քալէինք, կ'ըսէ,

երբ աղաղակ մը լսեցի, և յանկարծ տեսայ առջևս էգ կորիլլոյ մը, որուն ծոցէն կախուած էր ձագը և կաթ կը ծըծէր : Մայրը կը շոյէր ձագուկը և աչուրներով անուշութեամբ կը փայփայէր : Այս տեսարանը այնչափ սրտաշարժ և այնպէս շնորհալի էր որ ես զարմացած կեցեր էի, մտածելով ինքնիրենս թէ լաւագոյն չէր արդեօք զանոնք իրենց հանգարտութեանը մէջ ձգել : Բայց որոշմունք ընելէս առաջ՝ որսորդս հրացանը պարպեց և մայրը սպաննեց :

» Մայրը ինկած էր, բայց ձագուկը դեռ անոր կպած կեցեր էր, և գիտալի աղաղակաւը զինքը շարժել կը ջանար : Ես առաջ քալեցի, և երբ խեղճ պղտի ձագուկը զիս տեսաւ, զլուխը մօրը ծոցին մէջ ծածկեց : Դեռ ոչ կրնար քալել, ոչ խածնել, ուստի առանց դժուարութեան ձեռք ձգեցի, և բռնեցի զինքը, մինչդեռ իմ մարդիկներս մայրը գաւազնէ մը կախելով բեռնաւորեցան : Գիւղաքաղաք հասնելով դիակը գետին դրին, ես ալ ձագուկը քովը կեցուցի : Երբոր զմայրը տեսաւ, դէպ 'ի իրեն գընաց և գիրկը ինկաւ . բայց չգտաւ իր սովորական կերակուրը, և տեսայ որ կը սկսէր տարակուսիլ, և սկսաւ ողբական ձայներ հանել « հո, հո, հո », որ իմ սիրոս ալ կը շարժէր :

» Անօգուտ տեղը կաթ փնտուեցի այս խեղճ ձագուկին համար որ դեռ ուրիշ բան չէր կրնար ուտել, ուստի իր բըռնուելէն երեք օր վերջը մեռաւ : Առջինէն աւելի հանգարտաբարոյ կ'երեար, վասն զի ձայնս կը ճանչնար, և երբ զիս տեսնար գալ՝ մօտենալ կը ջանար » :

Երբորդ անգամ մ'ալ Պ. տիւ Շայլիւ հանդիպմամբ ողջ ձագ կորիլլոյ մը բռնեց, այսպիսի պարագաներով :

Ժամէ մը 'ի վեր որսորդութեան զբաղած, երբոր պղտի կորիլլոյի մը մայրը կանչելուն աղաղակը լսուեցաւ, յառաջընթաց անձինք սկսան մազլցել անտառային մարդիկներու պէս : Կէս ժամուան մէջ երկու հրացան պարպուեցաւ . Պ. տիւ Շայլիւ վազեց և կորիլլոյ մայրը մահացու վիրաւորուած դտաւ,

սակայն ձագուկը մացառներուն մէջ ապաւինելով ազատած էր :

Պահուըտեցան որպէս զի դառնալուն հանդիպին . քիչ ասենէն զարձաւ, ցատքեց մօրը վրայ և սկսաւ զինքը փայփայել և դիել : Որսորդները խկոյն յարձրկեցան . այս պղտի կենդանին յայտնի էր թէ գեռ երկու տարեկան չկար, բայց ուժով դէմ դրաւ ու կրցաւ փախչիլ . սակայն դարձեալ բռնուեցաւ, և քանի մը վայրկենէն ետքը կապուած էր :

Այս էգ կորիլլոյ մըն էր . երբ մօրը քովը տարին՝ վրան ինկաւ, զլուխը մօրը ծոցին մէջ խոթեց . սրտաշարժ տեսարան մըն էր եղածը :

Դժբաղդաբար այս պղտիկ էղը տասը օր միայն ապրեցաւ . պղտի արու ձագին պէս կատաղի չէր, ինչպէս որ վերը պատմեցինք, բայց հաւասարապէս նեն գաւոր էր : Երբոր իրեն մօտենային, նոյն սպառնալից կերպերը կ'ընէր, աչքերը՝ թէպէտև աւելի անոյշ, նոյնպէս շէկ և խորամանդ նայուածք մ'ունէին : Անտանելի արու ձագին պէս աչուրները վրաս կը տնկէր չար խորհուրդ մը երկնելով, կը գրէ Պ. տիւ Շայլիւ . ետքը փայլակնանման արագութեամբ թևովը և բաղկաւը մէկ կողմանէ հողուն կը յենուր, և միւսովը կը ջանար հարուած մը տալ մատուրներով զիս ձեռք բերելու համար : Բաղդ կը սեպէի ոտքին բութ մատին ճանկուտմունքէն աղատիլս : Բոլոր շարժմունքը կարգէ դուրս թեթև, և ուժը հասակին և պղտիկութեանը համեմատ ճշմարտիւ անսովոր բան էր » :

—